

Մ Ե Տ Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

Պատիւ, յարգանք Մեծ Մեսրոպին,
Որ գիր տւաւ հայ ազգին.
Աչքը բացեց խաւար կոյրի,
Լեզու տւաւ մեծ համրին:
Լուսաջահը ձեռքն առած՝
Խաւարի դէմ մարտ մղեց.
Թմրած գանգը, հանգած սիրտը
Զօրեղ թափով հրդեհեց:
Լուսավառան դարձաւ աշխարհն,
Գիր ու դպրոց ուռճացաւ.
Կրում, կարգում, թարգմանում են
Աշակերտներն սրտացաւ:
«Ոսկեղէն դար» ասին պատմիչք
Այն վերգարթի մեծ դարը.
Մեծ ու մանուկ գրիչ առան
Ու գովեցին այն դարը:
Սակայն այժմ, մեծ վարժապետ,
Գիր ու գրիչ ծախեցինք.
Սուրբ աւանդդ օտարի հետ
Թեթև ու հեշտ փոխեցինք:
Պատիւ, յարգանք Մեծ Մեսրոպին,
Որ գիր տւաւ հմտալից.
Ամօթ, անէծք այն վատ հային
Որ գիրն հանեց իր սրտից:

ԳԷՈՐԳ ԲԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ